ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2025-9-5-Ա

ք. Երևան 24.11.2025թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2025 թվականի նոյեմբերի 24-ի նիստում քննարկեց 2025 թվականի ապրիլի 15-ին արտոնագրային հավատարմատար Ալեքսանդր Նահապետյանի կողմից ներկայացված «Aktsionernoe Obshchestvo "Nizhegorodsky khimiko-farmatsevtichesky zavod"» ընկերության (Salganskaya St., 7 RU-603950 Nizhny Novgorod, RU) «УРИНАЛГИН» (IR1694646) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ շփոթելու աստիճան նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույն կամ նույնատիպ լինելը սպառողների մոտ շփոթություն առաջացնելու հավանականություն է պարունակում: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող «Urinal» (WALMARK, a.s. Oldřichovice 44 CZ-739 61 Třinec (CZ) 812, IR 960305) շփոթելու աստիճան նման բառային ապրանքային նշանի առկայության պատճառով: ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշման «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 119-րդ և 122-րդ կետերով սահմանված հիմքերով բառային ապրանքային նշաններին նման են համարվում բառային ապրանքային նշանները, որոնք ունեն ձայնային նմանություն, որոնց նմանությունը որոշվել է ձայնային հատկանիշներով: Չնայած հայտարկված ապրանքային նշանը ներկայացված է ռուսերեն այբուբենի տառերով, իսկ համեմատվող ապրանքային նշանը ներկայացված է անգլերեն այբուբենի տառերով, այնուամենայնիվ դրանք զուգորդվում են միմյանց հետ իրենց հնչողությամբ, քանի որ հակադրված ապրանքային նշանն ամբողջությամբ ներառված է հայտարկված ապրանքային նշանի մեջ: Հետևաբար տեսնելով դրանցից մեկը, միջին սպառողի մոտ կարող է պատկերացում

առաջանալ մտապատկերված մեկ այլ նշանի մասին, որի հետ ինքն արդեն առնչվել է: Ապրանքային նշանների նմանության առավել ընդհանուր չափանիշը տնտեսական շրջանառության ընթացքում սպառողի կողմից դրանք շփոթելու հնարավորությունն է: Նշանի նմանությունը որոշելիս հաշվի է առնվում, որ սպառողը, որպես կանոն, հնարավորություն չունի համեմատելու երկու նշանները, այլ առաջնորդվում է նախկինում տեսած նշանի մասին ունեցած ընդհանուր տպավորությամբ:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու մասին, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ շփոթելու աստիճան նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույն կամ նույնատիպ լինելը սպառողների մոտ շփոթություն առաջացնելու հավանականություն է պարունակում: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող «Urinal» (WALMARK, a.s. Oldřichovice 44 CZ-739 61 Třinec (CZ) 812, IR 960305) շփոթելու աստիճան նման բառային ապրանքային նշանի առկայության պատճառով:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ կրկնական փորձաքննության արդյունքում կայացված որոշումը իրավաչափ է:

Բողոքարկողի ներկայացուցիչը կարծում էր, որ հայտարկված ապրանքային նշանը գրանցման ենթակա է:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Ալեքսանդր Նահապետյանի կողմից ներկայացված «Aktsionernoe Obshchestvo "Nizhegorodsky khimiko-farmatsevtichesky zavod"» ընկերության «УРИНАЛГИН» (IR1694646) ապրանքային նշանի գրանցումը մերժելու

մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը մերժել և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԱՆՈՒՇԻԿ ԱՎԵՏՅԱՆ